ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/58 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

(իրականացված հարցման կարգով)

Քաղ. Երևան 02 հուլիսի 2020թ.

2020թ-ի հունիսի 17-ից հուլիսի 2-ը տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/58** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Դ. Մադոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Տեխնիկական տնօրենի պ/կ.
Ս. Հարությունյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՄՍԱԿ և ՄԻ բաժնի պետի տեղակալ.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային բաժնի պետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Արմինե Ավետիսյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Մադոյանը, իսկ քարտուղարն էր՝ Արմինե Ավետիսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/58** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/58 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Դ. Մադոյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Անջատիչ	4699440
2.	Կառավարող սարք	1124700

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/58 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի հունիսի 17-ին, ժամը «11:00»-ին: ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ կետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/58 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	Ալեքս-Պրո ՍՊԸ	Ք. Երևան, Ռոստովյան 36/33	alexprollc1@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Ալեքս-Պրո ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/58** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
- Ալեքս-Պրո ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Ալեքս-Պրո ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակցի զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի			Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «X»	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1*	-	-	Ալեքս-Պրո ՍՊԸ	5400000	5400000
2*	-	-	Ալեքս-Պրո ՍՊԸ	1600000	1600000

*տվյալ չափաբաժինների մասով (1-ին և 2-րդ) վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև:

Որոշվեց՝

1. Դ. Մադոյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Ալեքս-Պրո ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:
3. Նիստը կասեցնել գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման համար:
4. Արմինե Ավետիսյանին՝ ծանուցել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով բավարար գնահատված մասնակից՝ Ալեքս-Պրո ՍՊԸ-ին բանակցությունների վարման մասին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված հայտ ներկայացրած Ալեքս-Պրո ՍՊԸ-ի գնային առաջարկը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գերազանցում են **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/58** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գները, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի. (ֆին. Միջոցները գերազանցող գներ/բանակցություններ)՝

Ալեքս-Պրո ՍՊԸ-ի կողմից նոր նվազեցված գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Որոշվեց՝

1. Ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած և հաստատել «**ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/58 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին**» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցը հանվել է:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Դ. Մադոյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Հարությունյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Վարդապետյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Ավետիսյան _____